

«Divan»

Շնորհանդեսից անմիջապես հետո, մեզ հետ կիսելով տպավորությունները, Նինան տեսահոլովակի ծնունդը համեմատեց հայտնի մի ասույթի հետ՝ գիշերվան հաջորդում է առավոտը: Պարզվում է, ուրախալի այս նախաձեռնությանը նույնպես նախորդել էր փոքր-ինչ հիասթափությունը...

2013 թվականին Երեւանում «Հայաստանի Ձայն» նախագծի ընտրափուլի մասնակիցներից մեկն էի: Ցավոք, չհատեցի «Կույր լումների» սահմանը, -

Կատարեցի Լառա Ֆաբիանի «Je t'aime» երգը: Ժյուրին գնահատեց այն որպես գեղեցիկ ու կայուն կատարում, բայց... չընտրեց: Այդուհանդերձ, հայաստանյան «Արմենիա» հեռուստաընկերությունը ցուցադրեց իմ կատարումը: Սրան հաջորդեց տեսահոլովակի նկարահանման առաջարկը, ինչը, բնականաբար, պիտի ոչ միայն մխիթարեր, այլ նոր հորիզոններ բացեր իմ առջեւ: Նվերն իսկապես անսպասելի ու շատ երջանիկ անակնկալ էր: Շնորհակալ եմ անխտիր բոլորին:

Տեսահոլովակի ռեժիսոր Ռաֆֆի Ղազարյանն առաջարկեց ընտրել հենց Սայաթ-Նովայի խաղերից մեկը, ու նոր մեկնաբանությամբ արդեն, նվիրել այն հանձարեղ աշուղ-բանաստեղծի 300-ամյակին: «Թամամ աշխարհ...»-ը նկարահանվեց (ֆոտո-օպերատոր՝ Տաթևիկ Ջարգարյան, գործիքավորող՝ Արտեմ Սարգսյան) Թբիլիսիում ու, մասամբ Երեւանում: Հին ու նոր ոճերի համադրմամբ ընթացող հոլովակի սյուժեն ունի երեք հերոս՝ անվանի քամանչահար Հակոբ Խալաթյանը (Երեւան)՝ Սայաթ-Նովայի, Գվանցա Ախվլեղիանին (Թբիլիսի)՝ Աննայի դերում եւ աշուղի սիրո պատմությունը նորեն պատմող երգչուհին՝ Նինան:

- Մինչ թբիլիսյան շնորհանդեսը, - մենք ներկայացանք Երեւանի Dep Music Pub-ում, ուր ներկա գտնվեցին անվանի երաժիշտներ: Մի փոքր հուզված էի, թեւ արձագանքն ու մթնոլորտը դրական ու խրախուսող էին: Իսկ այսօր, թբիլիսյան «Divan»-ում, ես ինձ շատ ավելի անկաշկանդ եմ զգում, որովհետեւ կողքիս բոլոր նրանք են, ովքեր մանկուց հետեւում են իմ աճին ու զարգացմանը երգարվեստում:

Նինան երգում է դեռ մանկուց, մասնակցում տեղի ու Հայաստանում անցկացվող փառատոների, համերգների: Նրա առաջին քայլերը երաժշտական կրթություն ունեցող մայրն է գնահատել, ով հետելելով դստեր հաջողություններին, անվարան բերել է նրան երաժշտության աշխարհ՝ ուսումնառության տալով Թբիլիսիի Ջաքարիա Փալիաշվիլու անվան երաժշտական գիմնազիա, դաշնամուրի բաժին՝ Վրաստանի վաստակավոր ուսուցչուհի Ալլա Չխիկվաձեի դասարան: Ուսմանը զուգահեռ, 10-ամյա Նինան երգել է նաեւ

Թբիլիսիի Սուրբ Գեորգ եկեղեցու երգչախմբում, իսկ այսօր «Հայարտան» նախաձեռնությամբ կազմակերպվող գրեթե բոլոր համերգներին նա ներկայանում է իր գեղեցիկ կատարումներով:

- *Ես ուրախ եմ, որ վրացական միջավայրում եմ հասունանում,- երախտագիտությամբ* ՕՕՕՕՕ Օ ՕՕՕՕՕ,

- *որովհետեւ վրաց ժողովուրդը մշակութային հարուստ ու առանձնահատուկ պատմություն ունի, եւ միայն իրեն հատուկ ձեռագրով է տեսանելի դառնում յուրաքանչյուր երկրում: Ուստի դպրոցն ավարտելուց հետո, շարունակեցի ուսումնս երաժշտական հենց նույն գիմնազիայում (Ավթո Ռեիշվիլու դասարան), որ վերակազմավորվել էր արդեն որպես ուսումնարան: Իսկ այժմ սովորում եմ Եվգենի Միքելաձեի անվան երաժշտական ուսումնարանում, վոկալ բաժնի նախապատրաստական կուրսում, պրոֆեսոր Լամարա Գոգլիչիձեի դասարանում:*

Օժտված լինելով ձայնի լիրիկական սոպրանո տենորով, Նինան փորձում է իրեն տարբեր ոճերում: Երգում է ինչպես ռոք, ջազ ու փոփ, այնպես էլ ժողովրդական, իսկ մոտ ժամանակներում որպես անակնկալ նախատեսում է ներկայանալ դասական ժանրում եւս: ... Այս ամենի հետ մեկտեղ Նինան ու նրա ամուսինը` Արթուրը, հրաշալի զույգ են: Հաճելի է տեսնել, թե ինչպես է Արթուրը ոգեւորում, սատարում ու աջակցում երիտասարդ իր կնոջը, դրանով ամրացնում ու արժեքավոր դարձնում շնորհալի երգչուհու ազատ ճախրանքը երգի դյուբոլ աշխարհում:

ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ